ԳԼՈՒԽ ՃԿԹ.

Որում աշխարհի և 'ի գաւառի գոցի գաւառապետ դաւաճան որում զրկեալ լիցի տանն հայոց, 'ի բերմանէ պտղոյն աշխարհին իւրոյ անկցի գաւառապետութենէ, և ագարակն նորա եօթն ամս մանրամասնաբար քննութեամբ հանեսցի բաժին տանն հայոց և ոչ ներեսցի նմայ շիւղ մի յարթի։

ԳԼՈՒԽ ՃԿԺ.

Ամենայն իշխան ծայրագոյն իշխանութենէ մինչև մանաւոր իշխանութիւնք ով որ որ լցէ եթէ գոցի կաշառառութիւն նա իջցէ վառաց և իշխանութենէ իւրմէ, և հատուսցէ կաշառն առ առն յորմէ ընկալաւ, և այնքան ևս վասն տանն ողորմութեան հայոց, և այրն այն նախատեցեալ լինի առաջի ամենեցուն և անկցի իշխանութենէ իսպառ։

ԳԼՈՒԽ ՃԿԱ.

Ամենայն մեղաւոր քրէական որում ելանէ վճիռ մահու 'ի վերայ նորա եթէ գոցի թողութիւն 'ի նախարարէ հայոց, կեանք նորա թողեալ լինի նմայ այլ ոչ գոցէ պատիւ և ոչ պաշտօն ոչ ոք պաշտօնատարութեան։